Նոր ժամանակների կրթություն

Երևան

Հետազոտական աշխատանք

Առարկա՝ Ես և շրջակա աշխարհ

Թեմա՝ «Ես և շրջակա աշխարհը» առարկան՝ որպես հասարակագիտական առարկաների հիմք։

Կատարող՝ Երևանի Հ.Իսակովի անվան հ.132 հիմնական դպրոցի
Դասվար՝ Ռեբեկա Մանուչարյան

Բովանդակություն

1. Ներածություն 3

2. «Ես և շրջակա աշխարհը» առարկայի ուսուցման նպատակը. 4

3. «Ես և շրջակա աշխարհը» առարկայի հիմնական խնդիրները. 7

4. Կապը այլ առարկաների հետ.....8

5. Հասարակագիտական առարկաներին և թեմաներին համապատասխանող ընդհան-րական գաղափարներ.....10

6. Եզրակացություն.....15

7. Գրականության ցանկ.....16

Ներածություն

Աշխատանքի արդիականությունը: Աշխարհը փոխվում է արագընթաց տեմպերով և անկանխատեսելիորեն: Տեղեկատվությունն ու գիտելիքները ձևավորում են մեր աշխարհայացքը: Այն ինչ մի ժամանակ թվում էր հավերժական ու անփոփոխ, այսօր միայն հարաբերական է կամ նույնիսկ ամբողջությամբ՝ սխալ:

Բնության վրա մարդու ներգործության ծավալները իրենց որակական և քանակական բնութագրումներով այսօր համամոլորակային նշանակություն են ձեռք բերել: Այդ առումով անհրաժեշտություն է առաջացել կրթության նկատմամբ սկզբունքայնորեն նոր մոտեցումների առաջադրումը, կրթության բովանդակության արդիականացումը: Պատասխանատվությունը երկիր մոլորակի ճակատագրի նկատմամբ այսօր յուրաքանչյուր քաղաքացու պարտքն է և յուրաքանչյուր աշակերտ պարտավոր է իմանա բնության օրենքները, օրինաչափությունները, մարդու և բնության փոխազդեցության առանձնահատկությունները, բնության յուրահատկութ-յունները: Այդ առումով կարևորվում է բնագիտական հոսքի առարկաների դասավանդ-ման անհրաժեշտությունը հանարկրթական դպրոցի բոլոր աստիճաններում:

Աշխատանքի նպատակը. Ուսումնասիրել «Ես և շրջակա աշխարհը» առարկան՝ որպես հասարակագիտական առարկաների հիմք:

Աշխատանքի տեսական նշանակությունը. ՀՊՉ-ից և առարկայական ծրագրերից վեր հանել ես և շրջակա աշխարհը առարկայի կապը, որպես հասարակագիտական առարկաների հիմք:

Աշխատանքի գործնական նշանակությունը. «Ես և շրջակա աշխարհը» առարկան՝ որպես հասարակագիտական առարկաների հիմք թեմայի շրջանակներում ուսում-նասիրել աշխարհագրություն, հասարակագիտություն, ֆիզիկա, ֆիզիկական կուլ-տուրա առարկաների առարկայական ծրագրերը:

Աշխատանքի կառուցվածքը. Աշխատանքի ծավալը կազմում է համակարգչային շար-վածքով 16 էջ, այն բաղկացած է ներածությունից, մեկ գլխից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի ուսուցման նպատակը

«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված պետական պարտադիր առարկա է 2-4-րդ դասարանների համար: «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված ուսումնական դասընթացը կոչված է օգնելու երեխային՝ ճանաչել իրեն ոչ միայն որպես անհատ, այլև որպես հասարակության և բնության մասնիկ[3]:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի նպատակն է սովորողների մեջ ձևավորել շրջապատի նկատմամբ ուշադիր լինելու, հետազոտելու, խնամելու, պահպանելու, բարեկարգելու կարողությունները, նպաստել հաղորդակցվելու, համագործակցելու, շրջապատող մարկանց նկատմամբ հարգալից լինելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը: Ձևավորել պատասխանատու և հոգատար վերաբերմունք բնության, մարդկանց, շրջակա միջավայրի նկատմամբ, հաղորդել բնության անկենդան և կենդանի տարրերի, մարդու, երկիր մոլորակի վերաբերյալ տարրական գիտելիքներ:

Նախորդ չափորոշչի հիմքում էր սովորողներին ծանոթացնել իրենց շրջապատող աշխարհին, այնտեղ կատարվող բնական-հասարակական երևույթներին ու օբյեկտներին, մարդկային հարաբերություններին,

- Սովորեցնել ճանաչել սեփական օրգանիզմը, ծանոթացնել օրգանիզմի խնամքի և հիգիենայի հիմնական կանոններին:
- Սովորեցնել արդյունավետ հաղորդակցվել և համագործակցել ուրիշ մարդկանց հետ, նրանց մոտ ձևավորել իրենց և շրջակա աշխարհը ճանաչելու հմտություններ:
- Նպաստել սեփական արժանապատվության զգացումի, հանդուրժողականության, շրջապատի մարդկանց նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի ձևավորմանը:
- Օգնել դառնալու աշակերտական կոլեկտիվի լիիրավ անդամ, ձևավորել և զարգացնել ինքնուրույն որոշումներ կայացնելու, սեփական արարքները վերահսկելու, դրանց համար պատասխանատու լինելու գիտակցություն:
- Նպաստել աշակերտների ինքնադրսևորման ու ինքնարտահայտման հմտությունների ձևավորմանը:
- Ձևավորել առողջ ապրելակերպին նպաստող վարքագիծ, բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի անհրաժեշտության գիտակցում:
- Նպաստել սեփական երկրի պատմամշակութային արժեքների ժառանգորդը լինելու գիտակցմանը[2]:

«Ես և շրջակա աշխարհը» առարկան ունի էկոլոգիական դաստիարակության հզոր ներուժ:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի բովանդակային հենքային առանցքը կազմում է մի շարք գիտությունների՝ աշխարհագրության, կենսաբանության, էկոլոգիայի, հասարակագիտության, տնտեսագիտության, ֆիզիկայի, քիմիայի, առողջ ապրելակերպի,

սոցոլոգիայի, իրավունքի գիտելիքների տրամաբանական ինտեգրումը:

Առարկայի ուսումնական նպատակը տարրական դպրոցում սովորողների սոցիալա-կանացումն է, աշխարհի ամբողջականության, բազմազանության և փոխադարձ կապերի, բնության, հասարակության և սոցիալ-մշակութային օբյեկտների և երևույթների միասնականության մասին նախնական պատկերացումների ձևավորումը, ինչպես նաև հոգեպես և ֆիզիկապես առողջ և ներդաշնակ զարգացող, ստեղծագործ անձի ձևավորումը, որը էկոլոգիական, մշակութաբանական տարրական գրագիտություն ունի, մարդկանց և բնության հետ փոխհարաբերություններում դրսևորում է բարոյաէթիկական նորմերին համապատասխան, չվնասող, անվտանգ, պատասխանատու վարք և հայրենասեր քաղաքացու նկարագիր ունի:

Ըստ նոր չափորոշչի առարկան նպատակ ունի հիմք դնել և սովորողներին օգնել՝

● Հասկանալու սեփական ինքնությունը՝ որպես անձ և անհատականություն:

● Ընդունել մարդուն որպես բարձրագույն արժեք, ընդունել իր հասակակիցներին՝ հարգելով նրանց առանձնահատկությունները, դրսևորել միմյանց նկատմամբ հարգալից, ոչ խտրական վարքագիծ:

● Արդյունավետ հաղորդակցվել,հասկանալ, քննադատաբար վերլուծել տարբեր տեսակետներ, արտահայտել սեփականը:

● Պատկերացում ունենալ ազգային, համամարդկային և համերկրային գաղափարնե-րից, իմանալ բազմազանության մասին և ընդունել այն:

● Ուսումնասիրել աշխարհը Հայաստանի տեսանկյունից:

● Ձեռք բերել փորձառություններ, որոնք հիմնված են իրենց հետաքրքրությունների վրա և խթանում են իրենց շրջակա աշխարհն ուսումնասիրելու ձգտումը:

● Կիրառել քննադատական և ռեֆլեքսիվ մտածողության տարբեր իրավիճակներ վերլուծելու, խնդիրներ լուծելու, որոշումներ կայացնելու հարցում:

● Զարգացնել բնագիտական հետազոտությունների համար անհրաժեշտ գաղափար-ներ, հմտություններ և սովորություններ:

● Գնահատել և ընտրել արժանահավատ տեղեկատվություն, հաշվի առնել տաբեր տեսակետներ և համադրելով մտածված եզրահանգումներ և պատասխանատու որոշումներ կայացնել:

● Հաղթահարել կոնֆլիկտային իրավիճակները, բանակցել և նախընտրել խաղաղ տարբերակներ, կարողանալ զերծ մնալ բռնությունից և բռնություն կիրառելուց:

● Տեղեկացված լինել որոշումների կայացման բարոյաէթիկական հետևանքների մասին:

● Ունենալ պատասխանատու և գիտակից վերաբերմունք սեփական և ուրիշների առողջությանն ու անվտանգությանը, ձեռք բերել համապատասխան սովորություններ։

● Հասկանալ հասարակական որոշ գործընթացների կարևորությունը, գիտակցել սեփական արձագանքի հնարավոր ազդեցությունը հասարակության վրա[1,էջ4-5]:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի հիմնական խնդիրները

● Անձնային, հաղորդակցական, ճանաչողական, ստեղծագործական բազմաբնույթ կրթական գործելակերպերի զարգացումը։

● Ճանաչողական ակտիվության և շրջակա աշխարհի մասին գիտելիքներ ձեռք բերելու ինքնուրույնության ձևավորումը։

● Մեդիագիտության ձևավորումը։

● Բնության, մարդկանց, հայրենիքի հանդեպ սիրո, հարգանքի և խնայող վերաբեր-մունքի դաստիարակությունը։

● Սեփական և ուրիշների առողջության հարցում գիտակից և պատասխանատու վերաբերմունքը։

● Իր նախնիների, անցյալի հանդեպ հարգանքը, պատմական և մշակութային ժառանգության պահպանության ձգտումը[1,էջ5]։

Կապը այլ առարկաների հետ

Ինչպես արդեն նշել էինք տարրական դպրոցում «Ես և շրջակա աշխարհը» առարկայից սովորողների գիտելիքները սերտորեն առնչվում են մայրենիին, մաթեմատիկային, տեխնոլոգիային, արվեստին, օտար լեզուներին ու ֆիզիկական կուլտուրային և ապահովում են միջառարկայական թեմատիկ կապերի և խաչվող հասկացությունների միջոցով: Այս դասընթացի արդյունքում ձեռք բերված գիտելիքները, հմտությունները և վերաբերմունքները արժեքավոր են և հիմք են հանդիսանում հետագայում միջին դպրոցի հասարակագիտական և բնագիտական, հարենագիտական բնագավառների առարկաների համար[1,էջ9]:

Աշխարհագրություն

Տարրական դպրոցում աշխարհագրության ուսուցման նպատակներն են.

● Մարդու, որպես բնության և հասարակության անբաժանելի մասնիկի, ընկալման, մարդկանց միջև գոյություն ունեցող ռասայական, ազգային, կրոնական, մշակութային և աշխատանքային տարբերությունների զանազանման կարողությունների ձևավորումը:

● Քարտեզից և շրջապատող աշխարհի մասին հանրամատչելի այլ աղբյուրներից բնական և հասարակական օբյեկտների և երևույթների վերաբերյալ տեղեկատվությունից օգտվելու և առօրյայում կիրառելու հմտոությոունեերի զարգացումը[4,էջ4]:

Հասարակագիտություն

● Բնութագրի մարդ, բնություն, մտածողություն հասկացությունները:

● Գիտակցի կարիքների ու ցանկությունների անսահմանափակությունն ու ռեսուրսների սահմանափակությունը:

● Հասկանա ռեսուրսները խնայելու, մարդու կողմից շրջակա միջավայրը պահպանելու և բարելավելու անհրաժեշտությունն ու ձևերը:

● Սահմանի առողջ և անվտանգ կենսակերպի կանոններն ու բաղադրիչները:

● Բացատրի և հիմնավորի անձի առանձնահատկությունները և հասարակական կյանքի օրինաչափությունները:

● Մեկնաբանի և վերլուծի սեփական հույզերը, ցանկությունները, կարիքները, նպատակները, սեփական յուրահատկություններն ու հակումները:

● Գիտակցի հույզերի, մտածողության և վարքագծի դերը աշխարհաճանաչողության գործում։

● Թվարկի մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքները և ազատությունները, բացատրի, թե ինչ դեր ունեն անհատը և պետությունը դրանք հարգելու և պաշտպանելու գործում[5,էջ3]։

Ֆիզիկա

● Ֆիզիկական օբյեկտների և մասին գիտելիքների ձևավորումը։

● Չափումներ, հաշվարկներ կատարելու, ստացված արդյունքները գնահատելու, ֆիզիկական երևույթների պատճառահետևանքային կապերը բացատրելու կարողությունների ձևավորումը։

● Սովորողների մտավոր որակների, բնության մասին գիտելիքները ուսումնական գործընթացում, անձնական և հասարակական կյանքում կիրառելու կարողությունների ձևավորումը։

● Արժեքային համակարգի, գիտական աշխարհայացքի հիմքեր ձևավորում[6,էջ3]։

Ֆիզիկական կուլտուրա

● Առողջ համակողմանի զարգացած, աշխատանքային գործունեությանը պատրաստ, սեփական ուժերին վստահ, առողջ և անվտանգ կենսակերպ դրսևորող արտակարգ իրավիճակներում կողմնորոշվող ու նախաձեռնող քաղաքացի ձևավորելը։

Վերը թվարկված առարկաները ինտեգրված են ես և շրջական աշխարհը առարկայում։ Այս առարկայի շրջանակներում սովորողները ձեռք են բերում տարրական գիտելիքներ, որոնք հետագայում խորացվում են վերոնշյալ առարկաների միջոցով։

Տրված առարկաների ծրագրերից դուրս գրված նպատակները համընկնում են 1-4 դասարանների «Ես և շրջակա աշխարհը» առարկայի նպատակներին, ՀՊՉ-ին և ծրագրով նախատեսված վերջնարդյունքներին։

Հասարակագիտական առարկաներին և թեմաներին համապատասխանող ընդհանրական գաղափարներ

Ըստ գործող չափորոշչի 1-4 դասարանների «Ես և շրջակա աշխարհը» դասընթացը կազմված է «Ես և ինձ շրջապատող մարդիկ», «Անվտանգ երթևեկություն», «Մեր բակը», «Իմ քաղաքը», «Հայաստան», «Երկիր», «Տիեզերք», «Բնագիտություն», «Իմ խնամած բույսերը», «Իմ խնամած կենդանիները» ուսումնական նախագծերից:

Ըստ նոր չափորոշչի ուսումնասիրվում են հետևյալ մեծ թեմաները՝ «Ես», «Ես և մարդիկ», «Ես և բնությունը», «Ես և տիեզերքը»:

1. Անհատ և հարաբերություններ

Անհատ և հարաբերություններ գաղափարը հիմնականում պետք է վեր հանի «Ո՞վ եմ ես», «Ո՞վ ենք մենք» հարցերի պատասխանները: Աշխարհաճանաչողությունը չի կարող լիարժեք լինել, եթե չսկսի ինքնաճանաչումից: Այս նյութի շրջանակներում սովորողներն ուսումնասիրում են իրենց և այլանհատների կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկանց փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրություններն ու տարբերությունները: Ծանոթանում և ուսումնասիրում են, թե ինչն է մարդուն մարդ դարձնում, նրա նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողություն-ներն ու բարեվարքության գիտակցումը: Ուսումնասիրում են «մենք» հավաքական կերպարի, հասարակության տարբեր խմբերի՝ որպես միավորի, ազգի, ժողովրդի, համայնքի և տարբեր խմբերի հավաքական նկարագրերի առանձնահատկություններն ու ընդհանրությունները, միմյանց հետ հարաբերակցվելու օրինաչափություններն ու միտումները[1,էջ25]:

2. Ժամանակ և տարածություն

Ժամանակի և տարածության մասին գաղափարը պետք է պատասխանի «որտե՞ղ» և «ե՞րբ» հարցերի. որտեղ է մեր տեղը տարածության և ժամանակի մեջ: Սովորողները պետք է ուսումնասիրեն տարբեր մարդկանց կենցաղը, նրանց պատմությունները, ճանապարհորդությունները, մարդկության պատմության շրջադարձային կետերը, հայտնագործությունները, գյուտերը, ինչպես նաև անհատների և քաղաքակրթություն-ների հարաբերությունները, դրանց փոխկապվածությունը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյունից: Պետք է ուսումնասիրեն իրենց ընտանիքի, բնակավայրի, հայրենիքի հետ կատարված փոփոխությունները ժամանակի ազդեցության համա-

տեքստում, ինչպես նաև ողջ աշխարհում նման միտումները և գործընթացները[1,էջ26]:

3. Անհատական և մշակութային արտահայտություն

Ի՞նչն է ստեղծագործական արտահայտման բնույթը և նպատակը, ինչպե՞ս ենք ինքնարտահայտվում: Պետք է ուսումնասիրվեն անձերի, խմբերի, մշակութային միավորների արտահայտչամիջոցները, որոնցով նրանք հայտնաբերում և արտահայտում են գաղափարներ, զգացմունքներ, բնություն, մշակույթ, հավատալիքներ և արժեքներ: Այն եղանակները, որոնցով մարդը ողջ պատմության ընթացքում անդրադարձել, տարածել և վայելել է ստեղծագործականությունը. մեր գեղագիտական ընկալումը: Սովորողները կուսումնասիրեն այն ուղիները, որոնցով ներգործում են, ընդլայնում և վայելում ստեղծարարությունը, արժևորում գեղեցիկը և արվեստը[1,էջ26]:

4. Գիտատեխնիկական նորարարություն

Ինչպե՞ս ենք հասկանում այն աշխարհը, որտեղ ապրում են, ինչպե՞ս է այն հարատևում: Սովորողները պետք է ուսումնասիրեն բնությունն ու դրանում գործող օրենքները, մարդկանց և բնական աշխարհի փոխազդեցությունը, թե ինչպես են մարդիկ կիրառում իրենց պատկերացումները գիտության և նրանում գործող սկզբունքների մասին, ինչպիսին է գիտական և տեխնոլոգիական նվաճումների ազդեցությունը համայնքների և շրջակա միջավայրի վրա, շրջակա միջավայրի ազդեցությունը մարդու գործունեության վրա, ինչպես են մարդիկ հարմարեցնում շրջակա միջավայրն իրենց կարիքներին[1,էջ26]:

5. Արդարություն և զարգացում

Մարդը և կենդանիները միասին են ապրում այս մոլորակի վրա՝ կիսելով երկրագնդի սպառվող ռեսուրսները, դրանք բաժանվում են նաև մարդկանց միջև, ինչը հաճախ կարող է կոնֆլիկտներ ու բախումներ ծնել, առաջացնել իրավունքների և պաարտականությունների սահման, խաղաղ գոյակցելուն միտված փոխհարաբերությունների անհրաժեշտությունը: Սովորողները պետք է հասկանան հավասար հնարավորությունների, խաղաղության պահպանման և հակամարտությունների մերժման հրամայականը և արդարության համատեքստում զարգացման հնարավորությունների կարևորությունը[1,էջ26-27]:

Ստորև ներկայացնենք «Աշխարհագրություն» առարկայի այն հիմնական թեմաները, գաղափարները և վերջնարդյունքները, որոնք պետք է ուսումնասիրեն «Ես և շրջակա աշխարհը» առարկայի շրջանակներում 1-4 դասարանների սովորողները: Հետագայում այս հենքի վրա պետք է արդեն միջին դպրոցում խորացվեն առարկայից ստացած գիտելիները:

Հիմնական գաղափարներ		Վերջնարդյունքներ
1	Քարոլորտ. կազմը, կառուցվածքը, գործընթացները, պահպանությունը:	●Ճանաչել երկրի մակերևույթի հիմնական ձևերը, կիրառել գիտելիքը իր շրջապատի ռելիեֆի տարբեր ձևերը բնորոշելու համար:(Տ.ԲՄ.Ե.1)
2	Ջրոլորտ. կազմը, գործընթացները, պահպանությունը:	●Բնորոշել ջրի պարզագույն ֆիզիկական և քիմիական հատկություններ (ագրեգատային վիճակներ, թափանցելիություն, լուծելիություն): (Տ.ԲՄ.Ե.2) ●Ճանաչել և տարբերակել ջրագրական օբյեկտները (օվկիանոս, ծով, լիճ, գետ, ճահիճ, աղբյուր):(Տ.ԲՄ.Ե.3)
3	Կենսոլորտ. էկոհամակարգեր, պահպանությունը:	●Ճանաչել իր շրջապատի վայրի և մշակովի բույսերը, բույսի մասերը: (Տ.ԲՄ.Ե.4) ●Ճանաչել ընտանի և վայրի կենդանիներին, նրանց բազմազանությունը: (Տ.ԲՄ.Ե.5)
4	Մթնոլորտ. կազմը, կառուցվածքը, գործընթացները, պահպանությունը:	●Ընկալել, որ մթնոլորտը մարդու շրջակա միջավայրում առկա է ամենուրեք: (Տ.ԲՄ.Ե.6) ●Բնորոշել օդի որոշ հատկանիշներ (թափանցիկ, անգույն և անհոտ լինելը): (Տ.ԲՄ.Ե.7)
5	Երկրի պտույտներն ու դրանց աշխարհագրական հետևանքները:	●Ընկալել Երկրի, Լուսնի, Արեգակի և մոլորակների գնդաձևությունն ու պտույտները:(Տ.ԲՄ.Ե.8) ●Բացատրել գիշեր-ցերեկ երևույթը և դրա հետևանքները մարդու կենսագործունեության և բուսակենդանական աշխարհի վրա:(Տ.ԲՄ.Ե.9) ●Մեկնաբանել տարվա եղանակների ազդեցությունը բնության վրա: (Տ.ԲՄ.Ե.10)

6	Քարտեզ և հատակագիծ, աշխարհագրական դիրք։	●Ընկալել գլոբուսը որպես Երկրի մոդել։ (Տ.ԲՄ.ՄՏ.1) ●Նկարագրել հորիզոնի հիմնական և միջանկյալ կողմերն ու կարողանալ կողմնորոշվել դրանցով։ (Տ.ԲՄ.ՄՏ.2) ●Կազմել որևէ տեղանքի հատակագիծը։ (Տ.ԲՄ.ՄՏ.3)
7	Բնակչության կազմը։	●Խմբավորել մարդկանց ըստ տարիքի և ազգային պատկանելիության։ (Տ.ՀԵԳ.ԲԱ.1)
8	Աշխատանքային ռեսուրսներ և միգրացիայի գործընթացներ։	●Ըմբռնել, որ մարդկանց ապագա աշխատանքը պայմանավորված է ձեռքբերած մասնագիտությամբ։(Տ.ՀԵԳ.ԲԱ.2) ●Հասկանալ, ովքերի են համարվում աշխատանքային ռեսուրսներ։(Տ.ՀԵԳ.ԲԱ.3)
9	Բնակչության տեղաբաշխում և տարաբնակեցում, ուրբանիզացման արդի գործընթացները։	●Ներկայացնել քաղաքի և գյուղի բնորոշ առանձնահատկությունները։(Տ.ՀԵԳ.ԲԱ.4) ●Որևէ բնակավայրի օրինակով ներկայացնել քաղաքի և (կամ) գյուղի բնորոշ գծերը։(Տ.ՀԵԳ.ԲԱ.5)
10	Պետական տարածք, սահմաններ, աշխարհաքաղաքականություն։	●Հասկանա, որ աշխարհի պետությունների պետական տարածքները միմյանցից բաժանված են պետական սահմաններով։(Տ.ՀԵԳ.ԱՔԲ.1)
11	Արդյունաբերություն։	●Ճանաչի իր շրջակա տարածքում եղած արտադրական օբյեկտները, բացատրել դրանց նշանակությունը։(Տ.ՀԵԳ.ՏԿՏ.1)
12	Գյուղատնտեսություն։	●Ճանաչել մշակովի բույսերն և ընտանի ու վայրի կենդանիները։ (Տ.ՀԵԳ.ՏԿՏ.2) ●Ճանաչել շրջապատում գտնվող սենյակային բույսերի, դեղաբույսերի և թունավոր սնկերի տեսակները։ (Տ.ՀԵԳ.ՏԿՏ.3)
13	Տրանսպորտ և կապ։	●Ճանաչել իր շրջակա տարածքում տրանսպորտի և կապի տեսակները, բացատրել դրանցից օգտվելու ձևերը։(Տ.ՀԵԳ.ՏԿՏ.4)
14	Ոչ արտադրական ոլորտի ճյուղերը։	●Ճանաչել իր շրջակա տարածքում եղած ծառայություններ մատուցող օբյեկտները, բացատրել դրանցից օգտվելու ձևերը։ (Տ.ՀԵԳ.ՏԿՏ.5)

15	Բնական պայմաններ և ռեսուրսներ, տեսակները, արդյունավետ օգտագործումը։	●Նկարագրել շրջակայքում մարդու գործունեությանը նպաստող և խոչընդոտող գործոնները։(Տ.ՄԲ.ՇՄ.1) ●Ճանաչել բնական հիմնական ռեսուրսները (հարստությունները)։ (Տ.ՄԲ.ՇՄ.2) ●Տարբերակել և կիրառել բնական ռեսուրսները խնայելու, մարդու կողմից շրջակա միջավայրը պահպանելու և բարելավելու պարզ ձևեր։(Տ.ՄԲ.ՇՄ.3)
16	Բնական աղետներ. տեսակները, տարածումը, դրանցից պաշտպանությունը։	●Նկարագրել շրջապատում հանդիպող բնական նշանակալի աղետներ։ (Տ.ՄԲ.ՇՄ.4) ●Կարողանալ ըստ իրավիճակի դրսևորել բնական աղետից պաշտպանվելու վարքագծի ճիշտ կանոններ։(Տ.ՄԲ.ՇՄ.5)
17	Բնօգտագործման և բնապահպանության հիմնախնդիրները։	●Օրինակելի հիման վրա քննարկել բնության բաղադրիչների խնայողաբար օգտագործման և բնական տարբեր օբյեկտների պահպանության խնդիրները։(Տ.ՄԲ.ՄԶՀ.1)

[4,էջ12-20]

Եզրակացություն

Վերլուծահամադրական մեթոդների օգնությամբ, ուսումնասիրելով առաջադրված խնդրի վերաբերյալ գիտական գրականությունը, հանգեցի հետևյալ եզրակացություն-ների՝

1. Թեմաները ներկայացված են այնպես, որ առարկայի շրջանակներում ուսումնա-սիրված նյութերը ընդլայնվում և խորացվում են մյուս դասարաններում, այնուհետև՝ հիմնական դպրոցի բնագիտական, հասարակագիտական, անվտանգ կենսակերպի և այլ բնագավառների դասընթացներում։

2. Պահպանված են թեմաների տրամաբանական հաջորդականությունը։

3. Ուումնական նյութերը ներկայացված են սովորողների տարիքային առանձնահատ-կություններին համապատասխան։

Գրականության ցանկ

1.«Ես և շրջակա աշխարհը» առարայի ուսուցիչների վերապատրաստում, մոդուլ 2: Առարկայի չափորոշիչ և օրինակելի ծրագիր, դասավանդման մեթոդներ, գնահատում: Լուսինե Ալեքսանյան, Հասմիկ Անտոնյան: 54 էջ

2.https://lusinepetrosyan77.wordpress.com/2012/01/12/%D5%A5%D5%BD-%D6%87-%D5%B7%D6%80%D5%BB%D5%A1%D5%AF%D5%A1%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D6%80%D5%B0%D5%A8/

3. https://escs.am/am/news/6828

4. https://escs.am/files/files/2020-07-29/f348731fe567ba1299a3274ea74f8f65.pdf

5. https://escs.am/files/files/2021-05-06/8b2822312f24a01c87db9c7d9ff24ad2.pdf

6. https://escs.am/files/files/2021-05-06/b6526079ca173fdf9b4973da618b8916.pdf